

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:

Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիստ խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լիզուով:

Յայտարարութիւններ ի համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԿԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Գործ ենք պահանջում.— ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մի կարծիք նախապէս գործերի մասին. Նամակ չկարգիք. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանից. Սպանիա. Նամակ թիւրքացից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ: ՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ԿՈՆԳՐԱՆ:

ԳՈՐԾ ԵՆԵՔ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Անցան այն ժամանակները, երբ մի քանի խորհրդածութիւններ շարադրողը, մի երկու յանգր յարմարեցնողը,— ազգային մտածողի, հասարակաց հոգատարի հըռչակ էր ստանում:

Դառն փորձերով ժողովուրդը համոզվեց, որ բարձրագոյն ծառերի և մութ խորհրդածութիւնների ասի յաճախ ծածկված են լինում մեծ դատարկութիւն, փառեցեցական աչքակապութիւն: Ժողովուրդը, որ առաջ շատ շուտ շլատում էր և խաբուում մեծ մեծ խոստումներով, անկերջ երգումներով, սկսում է քննադատաբար և կասկածով նայել իր նախկին հերոսներին վրա:

Ամենք և տարիներ շարունակ լսելով բազմաթիւ խոստումները և լայն ու մեծ գործերի մասին անվերջ կրկնվող ահա-նայիներ, ժողովուրդը հաւատով և յայտով սպասում էր, որ կը գայ մի օր, երբ խոստումները իրանց յայտնած իշխան իրաւորները փորձը կանեն:

Սակայն օրերն անցնում են միմեանց և տեղից, կեանքը առաջ է վազում անընդհատ կերպով, իսկ նրա պահանջները մնում են անկատար: Ուր մնացին իրաւոր-ծոյնները, ի՞նչ եղան նրանց խոստումներն-ը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՆԳՐԱՆ

Մեր առջին ծառայ Յիսուսի Գրիգորի և ուղղութեամբն Աստուծոյ պաշտօնիկու ամենայն Հայոց Յայտարարչի պատրաստ համազգային նախաձեռնար արժողոյ Արարատեան Առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի:

Աւետարանի սիրոյ ողջոյն մատուցանեմ առ ամենայն եկեղեցւոյ Հայոց, որք կան ընդ հովանեալ Մեծին Ռուսիոյ Խնամակալ Թագաւորութեան: Արթուր անուն վասն ձեր ամենեցուն հանդերձ միաբանական ուխտիւս, կալ մնալ ձեզ ի չնորս Տեառն ի ճշմարիտ հաւատս Աստուծապաշտութեան ի մէր և ի պատուիրան Աւետարանի ընկեր-սիրութեան. որոյ յայտնացոյց նշանաւ միայն ձա-նաչէ զձեզ աշխարհ թէ դուք Քրիստոսին էք և Քրիստոս ձեր:

Յետ ողջունական բանին, այժմ մասնաւոր կոնգրեսուս պիտի խօսիմ ընդ ընդ ժողովուրդ Հայոց, պարզ լեզուով և ոճով, որպէս զի դու չքմեղս լինելով չտեսն թէ չեմ հասկանար և չեմ իմանար զորոյ լեզուն և այլն:

Ես գիտեմ ըս ընտարութիւն, դու չուտով կը գայիմակցիս և գուցէ մեղադրելով կանես. Հայրիկի գնաց կաթողիկոս եղաւ. մոռացաւ իր պարտքը և ամեն բան. միայն մի անգամ չոր ողջունի կոն-գրակ մի հրատարակեց, ոչ խրատ խօսեց, ոչ պատ-էր տուաւ, բերան վազեց, գրիչ վար դրաւ և պնդեց անհոգ նստած է Էջմիածնայ վեհաբանում. չը գիտեմ, ի՞նչ կը խորհի, ի՞նչ կը մտածէ և ի՞նչ պիտի անէ, սպասում ենք և մեր համբերութիւն հատաւ:

Այն պարպէս կը թուիմ դատողաց առաջ, որով-

Երբ պէտք է վերջապէս կարգ ու կանոնաւորութիւն հաստատվեն մեր հասարակական գործերում: Ասեցեք խնդրեմ, երբ պէտք է հասարակական գործերի հաշուետուութիւնը հաստատ հիմքերի վրա կազմակերպվի. երբ պէտք է ընտրողական գործը կամայականութեան շրջանից օրինակա-նութեան վերածվի. երբ պէտք է բազմա-տեսակ ձգձգվող ընթացիկ գործերը ի-րանց պատշաճաւոր լուծումն ստանան: Երբ պէտք է վերջ դրվի անհասկանալի ար-շուանքին դէպի քահանայական սպարազը և ժողովրդի բարոյական ուսուցիչ ընա-րելու և նշանակելու գործը է ազատվի պատեհականութիւնից և քմահաճութիւ-նից:

Ձեզ ենք դիմում հասարակական գործի-ներ, հասարակական գործերի ղեկավարներ, Գուր, որ գեղեցիկ շարադրում էիք, դուք, որ լայն ու արձակ ծրագրում էիք, դուք, որ գրուում, յորդորում էիք ուրիշներին գոր-ծելու, փորձ փորձեցեք վերջապէս իրա-գործել ձեր ասածները կեանքի մէջ:

Ժամանակը և հանգամանքները ձեզ համար տեղ են բացել, ձեր ձեռքն են տուել հասարակաց գործեր կատարելու ղեկը: Եւ որ զլխաւորն է, ձեր գործու-նէութեան աշդուրթեան համար աւելացել են կեանքի մէջ գգալի կերպով գրաւական-ներ:

Բայց ի՞նչ ենք տեսնում մենք: Ոչինչ չէ կատարվում մէջտեղ: Իսկ դուք, ստանձնելով հասարակական գործե-րը, փոխանակ լուրջ կերպով նրանց վա-րելու և իրագործելու, շարունակում էք կրկնութիւններով զրադիչ: Հին խօսքեր խօսել, դարձեալ բառեր ու բառեր: Մինչև երբ: Գործ ենք պահանջում խօսքի և

հետև չը կամիմ փող հարկանել ի հրապարակ, այլ պէտք է պատմում ընդ, որ դու իմանաս, ին-լամուտ լինիս, համբերես ու կարճես քո մեղադ-րանքը:

Գաւ թէ ես կը սրտմտիմ կամ խուսափել կու-զեմ քո մեղադրանքէն. դի քաջ գիտեմ թէ այդպէս եղեր է մեր նախորդաց և ինձ համար էլ պիտի լինի և ո՛վ կարող է բաղմամբ, բաղմաբերան և պահանջող ժողովուրդի դատաստանէն խոյս տալ:

Օրհնեալ լինի ժողովուրդը, դատել պահանջել իւր իրաւունքն է, եթէ չը դատի, չը պահանջէ՝ գիտեմ ես թէ էն ժամանակը մեք որչափ անհոգ և ան-պիտան կը դառնամք. միայն թէ ուղիղ դատի, տարածում չը պահանջէ և գիտեսայ ժամանակ և թէ որչափ պահանջել պէտք է. Չ՛վ ամենայն ի-րաց ժամ է և ժամանակ, ասում է Սողոմոն:

Գու իմանալ կուզես թէ ինչ կը խորհի Հայրիկ-ինչ պիտի խորհի, Սաղմոս կը կարդայ, «Երանի՛ որ խորհի՛ դադարան և դանանին»: Այժմ թողած ամեն բան, աղքատներու համար կը խորհիմ. սո-ված ժողովուրդեան համար կը խորհիմ: Եւ այս հրաւեր կարգում ընդ, ժողովուրդը Հայոց, որ դու էլ պահ մի թողուս ամեն բան և միայն աղքա-տին համար խորհիս. որպէս զի Դաւթի և Յիսու-սի երանութեանց արժանի լինիս: Արդ սկսիմ մի համառօտ հաշիւ տալ ընդ և դու իմանաս թէ Հայրիկ իւր միաբանութեամբ ինչ վիճակում պա-շարուած ու պարտաւորված է:

Այսօր գրեթէ վեցերորդ ամիսն է այն օրէն, երբ ես արժանի եղայ ողջունել Էջմիածնայ Մայր Աթոռ՝ չուտ անցան գնացին այնչափ ուխտանա-ներ և մեծաղբորդ կեցցեցներն և այժմ՝ խոր լուռ-թիւն և տխրութիւն տիրեցին մեր շրջապատը և միայն լուրջ են անօթի, քաղցած գիւղական ժողովուրդին և ընտանեաց մանրիկ գաւառներուն լացն ու աղաղակ:

Վեց ամիսայ միջոցում գրեթէ հազարէն շատ աւելի զանազան խնդիրներ եկան կուսակցան ա-

գործի մէջ սերտ կապ և ներդաշ-նակութիւն:

Գուր գանգատվում էիք հասարակաց գործերի զանազալ առաջընթացութեան վրա, շտապեցրէք նրան վերջապէս, ո՛ւմ էք սպասում, ո՛ր օրվայ էք յետաձգում:

Գուր պնդում էիք ուսեալ և կրթված քահանաների կարեւորութեան մասին: Նը-պատեցեք այդ գործին:

Գուր յարձակվում էիք շողորթներին վրա՝ քաջութիւն ունեցեք հեռացնել ձե-ղանից ձեզ շողորթնողներին:

Գուր կեանք ու հոգի էիք պահանջում ամեն մի գործի մէջ, հեռացրէք ձեզ շրջա-պատող մեւելութեան ներկայացուցիչներին և հրաւիրեցեք կեանքին մարդիկ:

Գուր բողբոսում էիք մեր այն մեծապաշա-տիկ դասակարգի դէմ, որ աշդուրթնով իր ձեռքը գցել հասարակական գործերի ներ-կայացուցչութիւնը, քրմական խորհրդաւո-րութեամբ պատգամներ էր խօսում ու մտադիր չէր հաշիւ տալ իր գործերի մասին, նպատ-եցէ՛ք, որ ժողովուրդը զիտակցաբար վե-րաբերվի իր գործերին:

Իսկ եթէ դուք կը շարունակէք ապրել խեղճած միջոյնորդու, ոչինչ չանել ծրագրի-ներ և իղձեր իրագործելու համար և կը կերակրէք հասարակութիւնը գեղեցիկ խօսա-քերով միայն, — այլ ևս ձեզ ոչ որ չի հա-ւատայ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԿԱՐԾԻՐ ՆԱԽԹԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջին հինգ ամիսներում՝ գործերի անորոշ դրութեան և կերօսինի պահանջի կատարեալ բա-ցակայութեան չնորձ, Բագուի արդիւնաբերական կեանքին տիրում էր կատարեալ մեւելութիւն:

Ուստի Այդ խնդիրներ բաղմամտեալ էին, մեծ մասն ամուսնական կնճապից գործեր էին, որք խնդրում էին լուծել և շուտափոյթ լուծել: Մի-մասն ևս գիւղական ժողովրդի խնդիրներ էին, որք դաս դաս խմբովին եկան ներկայացան հեռուցեալ և մատուցել իրենց համախօսական թղթեր, որոնց թիւ հասնում էր մինչև հարիւր յիսունէն աւելի, և ինչ էին խնդրում. Հայրիկ, քահանայ կուզեմք, քահանայ Ոմանք հաստատե-լով ասում էին, Հայրիկ, մեր գիւղեր կան որ հինգ տարի, ութ տարի և մինչև տասն տարի է, որ ծը-խատէր ու սեփական քահանայ չուրեմք, որչափ զփութաւորութեամբ ուրիշ գիւղերէ քահանայ կը մուրամք, մանաւանդ ձմեռը ձիւն ու բուք եղած ժամանակ Ոմանք թէ, մեր գիւղերու քա-հանաներ ուղիւստ տարին անցուցած, խիստ ծե-րացած, զաւաճութեան վիճակին հասած են, էլ չեն կարող պաշտօն կատարել: Ժողովուրդի այս խնդրոց համար չեմ ուղեր մանրամասն գրել. «Ա-րարատի» մէջ թող կարդան ընթերցողներ Արշէն երէցի քարոզ:

Այս խնդիրներ ամեն ժամանակ սովորաբար եղած են և այնքան վատեցուցել չեն, որ և իցէ եղանակաւ կարելի է լուծել, կարգադրել և գոհ անել խնդրատուներն:

Բայց եկ տես, որ խնդրոց ամենամեծ մասն՝ գաղթականաց խնդիրն է, բոլորովին չբաւարկած. կտոր մի հացի կարգաւ գիւղական ժողովրդի պա-ղատանքն է, որոնք խումբ խումբ իրենց ընտա-նիքով, մանրիկ գաւառներով սկսեալ աշնանէն մինչև ցայսօր՝ կուգան կը լեցուին Էջմիածնայ Հայրապետանոցը: Եւ տես դու ինչ անհանդու-րժելի տեսարան բացվում է մարդոյն աչքին ա-ռաջ: Եւ ո՛վ կարող է գթօտ աչքով նայել ու չաբաւատուել:

Գլխուն թէ լքեալ ու յուսահատ ժողովրդի հո-գին իր անձկութեան մէջ քանապաղով կը դառ-նայ, և քանի բնական ու սրտառուչ նկարագիր

Այն օրից, երբ անցեալ հոկտեմբերի 26-ին ստորագրած պայմանագրի թերութիւնները սկսե-ցին քննվել, երբ կերօսնագործները երկու լամբ բաժանվեցին, Բագուից արտահանելիք կերօսինի քանակութիւնը օրից օր սկսեց պակասել և հասաւ այն աստիճանի, որ յունվար ամսից դէս՝ արտահանած կերօսինի քանակութիւնը այնքան չնչին է, որ չարժէ մինչև անգամ ուշադրութեան առնել: Գործերի այդ անորոշ դրութեան շնորհիւ կերօսնագործների մեծամասնութիւնը ստիպված էր դադարեցնել գործերը իր գործարաններում: Իսկ Նօթելի գործած արշաւանները այն աստի-ճան յուսահատ դրութեան մէջ էին գրել մեր կերօսնագործներին, որ նրանք չը գիտէին ինչ անել: Նրանք լարված ուշադրութեամբ հետեւում էին Պետերբուրգից ստացված հեռագրերին: Վերջապէս հեռագրից հայորդեց, թէ գործերը աշդու երբ են ստացել և մի քանի շաբաթից յե-տոյ վերադարձան մեր ներկայացուցիչները, բերե-լով իրանց հետ դաշնակցութեան ստորագրած պայմանագիրը: Նրանց ուղարկութիւնը մեծ էր: Այդ ուղարկութիւնը կրկնապատկեց, երբ պաշ-տօնապէս յայտնվեց, թէ Բագուից մինչև Բա-թում իւրաքանչիւր պուդի ֆրակտից, 6 ամիս ժամանակով, 5 կոպ. պակասացրած է:

Այդպէս, ուրեմն, գործերի անկման գլխաւոր պատճառներից մի քանիսը հեռացված են: Մար-տի 15-ից արդէն սկսվել է դաշնակցութեան կե-րօսինի արտահանութիւնը:

Այժմ մեր կերօսնագործները առանձին ուշա-դրութիւն են դարձրել նաև կերօսինի յատկու-թեան վրա, որը յամենայն դէպս, մրցելու ամե-նագլխաւոր պայմաններից մէկը պէտք է համար-վի: Շատ պարզ է, որ վատ ապրանքով, թէկուզ ինչ բարեյաջող հանգամանքներ էլ լինեն, մըր-ցելը անհնարին է, յաղթութիւնը հակառակոր-դի կողմը կը մնայ: Այդ հանգամանքը արդէն

կը հանէ թղթերուն վրա և իւր կրած ցաւեր պատմելու մի ճարտասան կը լինի: Եւ մտիկ ա-րի վշտազին ոգով, դուք էլ մտիկ արեք, ժողո-վուրդ Հայոց, և տեսեք ինչ կասեն:

Հայրիկ՝ մեք ոչ ամուսնական խնդիր ունիմք և ոչ քահանայի, մեք թողիմք մեր քահանայն մեր գիւղի եկեղեցւոյն պահպան. եկեղեցին ու քահանան մնացին առանց ժողովրդի, թողիմք մեր շտեմարան, ալիւրի փեթակ, հացն ու թնիր. տանտիկին ելաւ տնէն, կտրեցաւ ծուլին երգիքէն, թողիմք մառնի եղեր, լի ամաններով պանիրներ, թողիմք մեր կանաչ արտեր, մեր գութան ու հա-րօրներ, թողիմք անմասն Ալաշկերտու հայրենիք: Հապա մեր սուրբ Յօսանու երեքսորան վանք, Նպատ լեռ, Եփրատայ սուրբ գետ, ամեն մեր ինչ-քեր կաղոպուտ տուրեմ, առիւթ միայն մեր ըն-տանիք, հարսներ ու հասած աղջիկներ, անիմք քրիստոնեայ երկրին ապաստանեցանք: Մենք շատ զոհեր տուեմք մեր ընտանեաց սիրոյն հա-մար, որպէս զի աղաւթները դանոնք առանգող բիրտ քիւրտերուն ձեռքէն: Ե՛, Հայրիկ, մենք այ-ժմ ուրիշ բան չենք խնդրել, մեզ պէտք է մի-այն պատապարան ու հաց, զի մենք անտուն, անօթեան մնացիմք:

Այսպէս, ժողովուրդը Հայոց, աղուէմներ սեպա-կան որջ ունին, երկնից թռչուններ բոյն, ինչ-պէս ասաց Քրիստոս որ զուրկ գնելու տեղ չու-նէր: Միթէ Քրիստոսի նման իւր հաւատացեալ գաղթական Հայ ժողովուրդ ունի իւր գլուխ դը-նելու տեղ:

Կարսի սահմանագլխին սկսեալ գաղթական ժո-ղովուրդի տարածութեան մի ծայր հասած է միւ-չև երեանայ դաշտի գիւղեր. թէև մեծազոյն մա-սըն Կարսի նահանգում տեղաւորված են: Չեմ մոռանայ երախտաբար ոգով լիջել աստ և յանուն ազգին յայտնել իմ շնորհակալութիւնս երեանայ և Կարսի նահանգապետներուն, որք բարձրագոյն հրամանաւ և իրենց բարեսիրտ աղնութեամբ

վերատեսչական մասնաժողովի ղեկավարումը՝ Պալատ-
ովի ձեռքով կատարված քննությունն մասին, ընկե-
րությունն իրագործելիք մի քանիսը պահանջներն,
որ կարողացվի պ. Պալատովի կատարած քննության
գեկուցումը ամբողջապես Բայց այդ բանը երևի
չատ էլ հաճելի չէր լիազորներին մի քանիսին, ո-
րոնք սկսեցին բողոքել և պահանջել, որ Պալատովի
գեկուցումը չը կարողացվի վիճաբանությունից յե-
տոյ ընդհանուր ժողովի նախագահը թող տուեց
վերջապես կարգաւ պահանջած գեկուցումը։ Բո-
ղոքող լիազորները, իրանց գլուխ ունենալով Ա.
Մատինովին, վերկացան տեղերից և դուրս գնա-
ցին ժողովից։ Որովհետև այդ նիստում չը կարո-
ղացան քննվել բոլոր հարցերը, չորեքշաբթի, ապ-
րիլի 13-ին նշանակված է ընդհանուր ժողովի շա-
բուսական ժամը քաղաքային դռնայի դահլիճում։

Կ. Պոլսից մի մասնաւոր նամակով մեզ գրում
են հետեւեալը. «Այնքանին սպանել փորձող
Յակոբ պատանին ոստիկանության ատենանում,
իրան եղած հարցին թէ ինչ նպատակաւ կամեցել
է պատրիարքին սպանել՝ հետեւեալ պատմութեան
է տուել. «Հինգ հարիւր տարիէ ի վեր մեր հայոց
ազգը հաւատարիմ ճանաչուած էր յայն կառավա-
րութեան. այն ատենին ի վեր շատ պատրիարք-
ներ եկան զայցին, բայց անոնց որով ազգը կառ-
կածելի չերկցաւ յայն տէրութեան. ասիկայ չը կըր-
ցաւ վարել ազգը և ժողովուրդը պատստմը ըլա-
րուն պատճառ եղաւ, ոչ ինչ կըրցաւ հասկանալ և
ոչ ալ տէրութեան կարողացաւ ժողովուրդան ցա-
ւերը ցոյց տալ կամ հասկանալ ինչպէս որ պէտք
էր, ուստի ևս ալ զանի սպաննելու փորձ վարձե-
ցի՝ որպէս զի ազգը աղատի»։

Յօդուած Գրիգոր Արծրունու արձանի
և գրուածքներ ի տպագրութեան ստա-
ցանք. 1) Ձիւնայի զաւառի վանքի գիւղից, գիւ-
ղական ուսուցչի միջոցով հանդիմանակված 3 բուր-
դին։ 2) Ձիւնայի գիւղից, հայոց դպրոցի աշակերտ-
ների մէջ հանդիմանակված 3 բուրդին։ Ուրիշն նախ-
կին 3098 բուրդին 28 կ. հետ այժմ ունենք 3104
բ. 28 կոպէկ։

Ներկայումս Պետերբուրգի ռուսաց մամուլի
խոսակցութեան նիւթ է դարձել Սիբերիեյ-
սկու 35-ամեայ յօրեկանի ճաշի ժամանակ պա-
տանած մի ինցլիստը. —ճաշի կարգադրիչները
մերժել էին և թող չէին տուել ճաշին մասնակ-
ցելու ռուս կրիստոս վալիսկու, որը ներկայումս
«Сибирский Вѣстник»-ի խմբագրութեան անդամ
է։ Այդ հրապարակական պատմի գլխաւոր պատ-
ճառն այն է, որ վալիսկին նորեւս տպագրել է
մի շարք վերին աստիճանի թշնամական և ազգը յո-
ղուածներ Բելիսկու, Գորբուլիսկու և առհասարակ
դրանց ժամանակակից առաջադիմական գրական
շարժման մասին։

Մօտ ժամանակներս, ինչպէս հայտնի էր
մայրաքաղաքի լրագրիները, գալու են թիֆլիս
կոմսոնի Ուլարովա և մի քանի օտարազգի
հնազանդներ, որոնց մասնակցութեամբ հետազո-
տութիւններ կը կատարվին Կովկասի զանազան
տեղերում։

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան
կարսի տեղական ձիւղի վարչութիւնը ուղարկել
է տպագրելու հետեւեալը. «Վարչութիւնը ստանա-
լով յօդուած՝ իր նախաձեռնութեամբ քաղաքումս
բացվիլը ձրի ճաշարանի՝ խմբագրութեան ձեռ-
քով մարտի 19-ին ուղարկած 100 բուրդին
պարտք է համարում սրանով յայտնել իր խորին
չորհակալութիւնը նուիրատու անձանց և յարգե-
լի խմբագրութեանը»։

Ապրիլի 8-ին Պետերբուրգից վերադարձաւ
քաղաքս թիֆլիսի նահանգապետ Իլյան Շերկա-
շիճէ։

Վանում տիրող սովի մասին արտասահմանի հա-
յոց մի լրագիր հետեւեալն է գրում. «Որովայ ամենա-
յուզի ինդիւս եղած է հայի ինդիւրը, հայ չի
կայ ժողովրդին. հայազօրծները կրպակներին ա-
ռաջը ամեն օր այն աստիճան անազնի բազմու-
թիւնով կը խոնարհ, որ սոսկումով մը 80—81 թուա-
կանը կը յիշեցունէ։ Փողոցները հայ մեղսագործների
թիւը տուր մնացողների թիւէն աւելի շատ է. կան
ընտանիքներ որոնք օրերով առանց հացի կը մնան,
որովհետև մեղսագործ էլ կամպան»։

Կովկասեան ցնդօրական կոմիտէի նախագահ
Մ. Պ. Գալիկէլ այս օրերս վերադարձաւ մեր քա-
ղաքը Պետերբուրգից։

Մակաբովա թոյլատրված է հրատարակել մի
նոր լրագիր «Вестник» անունով, Կ. Ն. Յիւլիովի
խմբագրութեամբ։

Հասպում հնք հաղորդել, որ «Մշակի» անցեալ
համարում հաղորդած լուրը, թէ ցնդօրական կո-
միտէի նախագահ Մ. Պ. Գալիկէլ նշանակվում է
թատրոնի դիրեկտոր. —բոլորովին սխալ է։

Ալաշկերտից մեզ հետեւեալ տեղեկութիւնն են հա-
ղորդում. «Թաթարա-Գալէցի Յարութիւն աղայի աղ-
ջիկը Շէֆֆիլդ էֆէնդին առևանգելով՝ Կարին տարաւ
և կին արաւ։ Խոկ Բասէն գաւառի Հերթի գիւղը
դիմաւորված քիւրդերը պաշարելով կը պահանջեն
մի հայի աղջիկը, և կամ գիւղը կրակի կը տան.
գիւղացիք չուզելով զո՞ւ տալ, կը ստիպեն հօրը
յանձնել աղջիկը։ Սակայն աղջկայ եղբայրը վրա
կը հասնի և հերոսաբար կաղատի քրոջը։ Բայց
քրդերը իրենց վրէժը կ'անեն. —փախչող երե-
տասարդի և քրոջը յետեից կընկնեն և ճանա-
պարհին կը սպաննեն»։

Կ. Պոլսի լրագրիներէց քաղելով, մենք էլ հա-
ղորդել ենք, որ Կալաթայում վախճանվել է ծե-
րանի Յովհաննէս քահանայ խաչկիւսանը։ Այժմ
արտասահմանի լրագրիներում կարդում ենք, որ
Կ. Պոլսի լրագրիներէր հաղորդածը սխալ է և խա-
չկիւսան քահանան կենդանի է։

ՆԵՐՍԻԱՆԻՑ, թէ և մի փոքր ուշ, մեզ գրում են
հետեւեալը. «Մարտի 17-ին տեղիս թատրոնային
ները քաղաքային կլուրի դահլիճում ներկայացրին
Օստրովսկու «Արդիւնաւոր պաշտօն» յայտնի կոմե-
դիան։ Ներկայ էր Երևանի ընտիր հասարակու-
թիւնը։ Բայց չը նայելով ներկայացման բարեգոր-
ծական նպատակին՝ այն է յօդուած սովեանիս-
րի, արդիւնը հազիւ 50 բ. լինի։ Ներկայացմանը
ներկայ էին Երևանի նահանգապետը և մի քանի
ուսանիք։ Աւելորդ չենք համարում մի քանի խօսք
ասել խաղացողներին մասին։ Դառնալով պատասխա-
նատու դերը Մ. Տէր-Սարգսեան միանգամայն փը-
չացրեց, իր վերին աստիճանի անշնորհ խաղով։
Նրա դէմքի վրա ոչինչ հոգեկան արտայա-
տութիւն, նրա խաղի մէջ ոչ մի զգացմունք չը
կար։ Տիկին Ա. Տէր-Սարգսեան Պոլսեայի դերում
շատ ընտան էր առաջին երկու դործողութիւննե-
րի մէջ, իսկ երրորդում, որտեղ խաղը փոխվում
է դրամատիկականի և որտեղ հարկաւոր է զգաց-
մունք արտայայտել, շատ թոյլ էր և անաջող։
Դատաւարաբեւու չափ անտանելի էր պ. Բաբան
(Բելգորով), որը ոչ մի զգացմունք, ոչ մի խաղ
չուէր, կարծես դան անգիր ասող աշակերտ լի-
նէր։ Թոյլ էր նոյնպէս տ. Ամիրխանեանց Խլիայի
դերում։ Ներկայացման կենդանութիւն տուողներն
էին տ. Ն. Տիգրանեանց (Վիլիսկիայ), որը շատ
գեղեցիկ կերպով խաղաց խաբված, ջանքի, բայց
զեռու կենալը սիրող, միայն բռնակալ ամուսնու
ձեռքում տանջվող կնոջ դերն էր։ Յ. Յովհաննիս-
սեանը (Վիլիսկիայ), որի խաղի մէջ նկատելի էր
լուրջ ուսումնասիրութիւն և զգացմունքի արտա-
յայտութիւն։ Խոկ է. Տէր-Գրիգորեան գերազան-
ցեց բոլոր խաղացողներին, մեծ հմտութեամբ
ներկայացնելով Խաւովի թէ և փոքրիկ, բայց տի-
պիկական դերը»։

ՉԵՐՆԻԳՈՎԻՑ մեզ գրում են. «Այս տարի այս-
տեղ, ինչպէս և առհասարակ հիւսիսում, ձմեռը
անցաւ առանց ձիւնի։ Չմեռվայ ամբողջ ընթաց-
քում նոյն իսկ մի անգամ էլ 2 վերջով ձիւն չէ
կանգնել գետին։ Այդ երևոյթը հետաքրքիր է
այն հանգամանքի նկատմամբ, որ օրինակ Կով-
կասում և աւելի հարաւ, ինչպէս, օրինակ, թիւր-
քաց-Հայաստանում, ձմեռը խիստ ձիւնալից էր։

ԱՐՄԱՆԻՐԻՑ մեզ գրում են. «Յայտնի առևտրա-
կան տան ներկայացուցիչ պ. պ. Թարասով եղ-
բայրները, սիրով ընդունելով Կովկասի հայոց Բա-
րեգործական ընկերութեան խորհրդի առաջար-
կութիւնը, այսօր բացել են ստորագրութիւն յո-
ղուտ Կարսի նահանգի սովեանիքի։ Ի նկատի
ունենալով, որ գործի գլուխ անցած են Թարա-
սովիքի նման յայտնի և զիրք ունեցող մարդիկ,
որոնք ստորագրութիւն սկսել են, իրանք մի

նշանաւոր դուստր ստորագրելով, անկասկած պի-
տի յուսաւ, որ այս ժողովարարութիւնը մինչև
այսօր եղածներէց արդիւնաւոր կը լինի»։

ՂԱՆԻՑ մեզ գրում են. «Ամսիս 2-ին այս-
տեղ եկաւ դերասան Արէշեան՝ դերասանական
խմբով, որը իր կազմակերպութեամբ մի բացա-
ռութիւն է կազմում վերջին տարիներս գաւառ-
ներում չըջող հայ թատրոնական խմբերի մէջ։
Կանանց դերերի համար խմբի մէջ կան օր. Վար-
դիթեր, որի մասին մենք շատ լաւ կարծիքներ
ենք լսել և տիկին Փառանձեմ, որը երկրորդա-
կան դերերի համար վատ չէ։ Բացի Արէշեանից,
խմբի մէջ է և պ. Աղայանն։ Չենք կարող աջո-
ղութիւն չը ցանկալ պ. Արէշեանին, որ վերջին
ժամանակներս այսպիսի կանոնաւոր խմբով չըր-
ջում է գաւառական քաղաքները՝ ներկայացում
ներ տալու համար։ Ինչպէս լսում ենք, առաջին
անգամ խումբը խաղալու է «Հրեուհի» պիէսան,
հինգշաբթի, ապրիլի 7-ին»։

ՆԵՐՍԻԱՆԻՑ, թեմական դպրոցի նախկին ուսուցիչ
Համադապ խաղաքաչեան խնդրում է մեզ տպա-
գրել հետեւեալը. «Արձագանքի» № 39-ում տպա-
գրված է «Երևանի Ալեքսան Գոշէին» վերնագրով
մի յօդուած «Գօ—Ա» (Գօն—Բիշօտ Արարանցի)
ստորագրութեամբ, որի մէջ յօդուածագիրը ա-
սում է, որ իբրև թէ ևս եմ «Մշակի» թղթակ-
ցութիւն գործը։ Հարկաւոր եմ համարում պա-
տասխանել, որ «Մշակում» տպագրված «Ա—Գօ»
ստորագրութեամբ յօդուածը իմը չէ և ես երբեք
այդ անունով լրագրութեան մէջ դուրս չեմ եկած.
բայց քանի որ առիթը ներկայացաւ, չեմ կարող
չասել, որ «Մշակի» մէջ «Ա—Գօ»-ի գրածը Երևա-
նի թեմական դպրոցի վերաբերմամբ՝ միայն դա-
մայն ճշմարտութիւնն է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Խաբերդից գրում են. «Տիւրիկ որ իր
10,000 բնակիչներով և բազմաթիւ գիւղերով
կեդրոն մըն է եղած իր չըջակային մէջ
և ամեն տարի մեծ քանակութեամբ ցորեն ու
գարի կարտադրէ դէպի Արաբիկ։ Այն և Գու-
րուչայ այս տարի ինքն ալ անմասն չը մնաց
արմաթիւ ընդհանուր թանգութեան։ Յորինի զը-
րիւր որ 50 դրուշ կարծէր, այս տարի 300 բարձ-
րացած է, և նորէն ծախող չի կայ։ Գարին ալ, որ
ի չդոյն ցորենին աղբատին սնունդն էր, այն-
չափ բարձրացած է որ ցորենին հաւասարած է։
Յորենը թէպէտ առատ է, սակայն քանի մը շա-
նամոլ մարդիկ ամբարած են զայն և կը սպասեն
յառաջիկայ հունձքին, յուսալով աւելի բարձր
գինով ծախել իրենց ապրանքը։ Անգործութիւնը
ընդհանուր է, և պարագայ պտտողներուն թիւը շատ
մեծ է։ Որպէս 60 փարայով գործ կը վնասեն
ու չեն գտներ»։

Կ. Պոլսից գրում են, «Կարնոյ չըջակայ գիւղի
մը մօտ երեք ուղեւորներ ձիւնախառն փոթորիկի
բռնուելով խողովուր են։ Ասորցմէ միոյն դիակը
գտնուած է»։

«Հեռագրական տեղեկութեանց համաձայն, Կար-
նոյ Տիւրիկ գաւառակին ու չըջակայից մէջ մարտ
16-էն 16, անընդհատ ձիւն տեղալով գետինը և
րեք կանգուն բարձրութեամբ ձիւնով ծածկուել
է։ Ժողովուրդը ներքութեան մէջ ինկել է արմը-
տեաց թանգութեան պատճառաւ։ Համբաններն
ալ գոցուելով գիւղերու մէջ երթեկցութիւնը դադ-
րել են»։

«Նոյն նահանգին Անթապ գաւառակին մէջ
տան օրէ ի վեր տեղացող ձիւնն հալելով, գիւ-
ղաքաղաքը ողորուել է։ Թէ և մարդու կորուստ չէ
պատահած, սակայն չէնքերը մեծապէս վնասուել
են»։

«Վանայ Կարճիկ գաւառակի մէջ գիւղին մէջ,
ինչպէս անցանքները ծանուցուեցաւ, լեռան գա-
գաթէն անազնի ձիւնախոյտ մը գլորելով 15 տու-
ներ տակը մնացած էին՝ վաթսուշի չափ բնակիչ-
ներով։ Արդ, տեղական կառավարութեան կողմէ
հաղարի չափ գործաւորներ զրկուելով նոյն տեղը
պեղումներ կատարելի սկսուած են և կը շարու-
նակուին։ Մինչև հիմայ տուներու վիճակաց
տակէն ուր մարդեր ու գիւղեր հանուած են»։

«Վանից գրում են. «Երեկ, յունվարի 31-ին,
քաղաքիս Եֆէի-գալիու ըստած դրան առաջ կա-

ռավարական ասպարանքին կուշտը կայսերական
հրամանով կախուեցաւ Մանուկ Շատուրեան ա-
նուն 28—29 տարեկան երիտասարդը, ներկայու-
թեամբ քաղաքական և վիճակական պաշտօնեայ-
ներին։ Մահուան դատաւարատուած էր Շէյխ-Հէյ-
տէրզատէ բօլիս (ոստիկան) Նուրիի պատճառով
որ 1892 օգոստոս 20-ի գիշեր հրացանի երեք
դնդակներով սպաննուած զոհուեցաւ Շատու-
րեանների տան առաջ»։

ՍՊԱՆԻԱ

Սպանիայում, «Ind. Belge» լրագրի խօսքերով,
գործերի դրութիւնը գնալով վատանում է։ Անդա-
լուզիայի երկրագործական չըջաններում և բանու-
րական խոշոր կենտրոններում ճգնաժամը սաստ-
կանում է։ Մարդիկը անդադար տեղեկութիւններ
են ստացվում երկրի ներսում տեղի ունեցող ան-
կարգութիւնների և յուզմունքների մասին, որոնք
շատ յիշեցնում են երեք ամիս առաջ Սիցիլիայում
տեղի ունեցած յուզմունքները։ Ամեն քաղաքի-
նում կարելի է հանդիպել սոված մարդկանց խմ-
բերին, անգործ բանուորներին և հաց ու դործ
պահանջող թշուառներին։ Սպանիայում էլ, Սի-
ցիլիայի նման, ոչինչ միջոցներ ձեռք չեն առնում,
բացի ճնշելուց։ Կառավարութիւնը ըստ երեւոյթի
բոլորովին անգործ է և ոչնչով չէ կարողանում
երկրի մէջ տիրապետող ճգնաժամը վերացնել։ Թէ
բանը ուր կը հասնի, ոչ ոք չէ կարող դուշակել։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԱՅ

Ալաշկերտ, մարտի 17-ին

Դեռ այժմ կը թագաւորէ դառնաշունչ ձմեռը
Ալաշկերտու կողմը, և այդ հանգամանք ևս ա-
ռաւել վատթար աստիճանի հասցրած է ժողո-
վրեան դառնադոյն վիճակը։ Հացի պակասու-
թիւն, դարմանի սպառումը սոսկալի է, այնպէս
որ գիւղացիք միակ միջոց ընտրած են լեռը գը-
նալ, ձեղքել Ալաշկերտի յատուկ ձեան թանձրա-
ցեալ շերտերը, քրքրել, մի կողմի վրա դիզելով
կանգնեցնել ձիւնախոյտ, և նրա տակից դուրս
բերել զաղբ (զաղբ մի տեսակ բոյս է քանի մը
բազմածիլ արմատներով խիտ, դիւրակաւ և կո-
նածեղ զաղբ(թով) և փոխան դարձնելով՝ ծեծելով
կերցնել անասնոց։ Գարնան թող դժուար պէտք
է պակսի նրան լծկան գոմէջն ու եղը. ամենա-
լաւ եղը 50—80 դրուշ է (8 բուրդի) և ամենա-
լաւ ոչնչաւը 2½ կամ 3 բուրդի։

Սոյն մարտի սկզբին երևան եկաւ նաև խօսե-
րան, որ և մեծ կոտորած կանէ մանաւանդ ըլնող
գիւղերէից մէջ. բնական է որ նոքա հայերից
աւելի կեղտոտ և անմաքուր կենանք կը վարեն։
Քրդաց փոքրիկ փոքրիկ դիւղերէն—համզգան, մի-
րանկիցը, սողանցիք և զատոյցից մեռած չէ 500
հոգիէ աւելի. հիւանդացողներ շատ և անխնայ
կը մեռնին. իսկ հայ գիւղեր տարածուած չէ դեռ
ևս։ Կառավարութիւնը իւրաքանչիւր գիւղեր
առհասարակ պահապան զինուորներ դրած է՝ եր-
թեկութիւնը դադարեցնելու համար։

Երևակայեցէ՛ք սով և խօլեւած, —սոյն երկու սար-
սափ ազգող բառերը ըստ ինքեան կը հաս-
կացնեն, թէ ինչ վիճակի է մասնուած սոյն
ալաւարը։ Մի բռնիկ ունենք միայն երեւի
և հնազարեան, որ հասարակութեան կը քա-
րոզէ ուտել քաղցրեղեն, քան թիւրեղէն, դի այդ
երեւելի բժշկապետը փորձով իմացաւ թէ՛ բացի-
ները կը մեռնին աւելի քաղցրի մէջ, քան թէ
թիւրի։

Գարնան սկսվիլու հետ քիւրդերը կը սկսեն իրենց
աւազակութիւններ. նրանք դայրացած են, զի շատ
հայեր չունեցած տեղից մերժած են նոյնա առա-
ջարկութիւններ, որը հաց չէ տուած, որը դար-
ման, որը փող, որը խրոխտ դիմադրութիւն ա-
րած է, որը ամիսներով նրա և իր ընտանեկաց
և անասնոց պահելու խօսք տուած չէ, և այլ հա-
ղարաւոր պատճառներ։ Այս բանը ի նկատի ու-
նենալով, ժողովուրդը ծանր դրութեան մէջ է։

Դարա-Վիլիսի գաւառակը հեռագրաւ դիմեց
Պոլս յունաց պատրիարքին՝ յունադաւանութիւն
ընդունելու խոստում տալով. հազար տան կողմից
խոստում է եղել Միաժամանակ խնդրած են
պաշտպանութիւն, ընչից և կենաց ապահովութիւն։
Պատրիարքը խոստում տուած է յունադիւրով։

Քրդաց երկու աշխուրդներու, սեպտեմբ և
հայդաբցի ցեղերու մէջ թշնամութիւնը հեռ-
գհեռ կը բարձրի. սոյն ձմրան կուռեցին արդէն,
հայդարցիներն 10-ը, իսկ սիպկիներն 3 հոգի

մեռան, զարնան պիտի վերսկսուի ցեղային պատերազմը, որպէս համայնքները, որք միմեանց բնաջնջ արին:

Աւազներ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

— Լրագիրները խոսքերով, ապրիլի 13-ին անգլիական պարլամենտի զննութեան կը ներկայացվի մի բիլլ, որի հիման վրա հանքերում բանուրները պէտք է 8 ժամ աշխատեն Այդ բիլլը պահանջում է, որ հանքերում աշխատող ոչ մի բանուր օրական 8 ժամից աւելի չաշխատի: Խրաքանչիւր հանքատէր, որ կը խախտի այդ որոշումը, իւրաքանչիւր անգամայն համար 8 շփիլինգ ստուգանքի կենթարկվի:

— Կայրէից արտասահմանեան լրագիրներին հաղորդում են, որ ծովագետ Ալէքսան ասել է Կայրէի զիպոմանները մէկին, թէ ինքն Պետերբուրգից դեռ եւ ոչինչ հրաման չէ ստացել Կ. Պոլսի գնալ: Այնուամենայնիւ հնարաւոր են համարում, որ այդ այցելութիւնը տեղի կունենայ: Ռուսաց զինպան Նիկիտով Կ. Պոլսի վերադառնալուց յետոյ:

— «Tamps» լրագիրն Կ. Պոլսից հաղորդում են, որ եգիպտական խեղդիւր նշանակում է ստիւնի երկրորդ աղբիւյ, իշխանուհի Նարմի հետ խեղդիւր մայրը եկող ամսին Կ. Պոլսի է գնում վերջնական բանակցութիւնների համար:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍՏՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 ապրիլ: Պետերբուրգի նահանգական դատարանում մայիսի 3-ին նշանակված է Գրիբանովի կողմը կեղծելու վերաբերեալ գործը: Կտակված է 10 միլիոն ռուբլի գումար Դատի են ենթարկված: Կոմս Ա. Վ. Սոլզգուր, ֆրանսիական քաղաքացի Գաբո, շտաբ-կապիտանի որդի Տոպոլցկին, նախկին նոտար Մովսիսյանի նահանգական դատարանում Զիլիովի, ագնոական Բուրնակի, մէջնակին Անիֆովի, տիտուլարի սպիտակի Քէնիւայի և երդուեալ հատարամատար Ֆիշեր: Առաջին երեքը մեղադրվում են նրանում, որ Գրիբանովի անունից կտակ կազմեցին կեղծ ստորագրութիւններով և ներկայացրին Պետերբուրգի նահանգական դատարանի հատարատութեանը, մնացածները մեղադրվում են դործակցութեան մէջ:

ԼՕՆԴՈՆ, 8 ապրիլ: Համայնքների ժողովը, եթէ ժամ չարժանակող վիճաբանութիւններից յետոյ, ընդունեց առաջին ընթերցանութեան ժամանակ Զոն Մորլէյի առաջարկած բիլլը, որ վերաբերում է իրանդիայից վաճառված արկղաւորների վերաբնակեցնելուն: Մտադրութիւն կայ հիմնել միջնորդ դատարան ընկելու համար արկղաւորների խողովների վերաբնակեցնելու և այդ առիթով կարգադրութիւններ անելու մասին: Այժման արկղաւորները վարձատրութիւն կը ստանան դանձարանից: Պարենկանները դէմ են բիլլին, անբաւարար համարելով դրան:

ԼԻՍԱԲՈՆ, 8 ապրիլ: Խոջբայի էպիդեմիայի պատճառով, սահմանի վրա նախադրուշական միջոցներ են ձեռք առնված: Լիսաբոն բժիշկ է ուղարկված հիւանդութեան բնաւորութիւնը ուսումնասիրելու համար:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 ապրիլ: Լալում է, որ Նովոգորոդի նահանգապետ Մոսոլով նշանակվում է օտար դաւանութիւնների ղեկավարումների գերեզմանի նախկին պաշտօնում: Երեկ յանդարձակի վիսահանսկեց բժշկական ակադէմիայի պրոֆէսոր Սոկոլով սրտի հիւանդութիւնից:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 ապրիլ: Պաշտօնապէս յայտարարված է, «Թագաւորանոց Յէսարմիլի ապրիլի 8-ին նշանակված է Հէսսենեան Ալիսա արքիեպիսոպի հետո: Գերմանական, աւստրիական և անգլիական լրագիրները ուրախութեամբ ողջունում են Թագաւորանոց Յէսարմիլի նշանադրութիւնը արքիեպիսոպ Ալիսայի հետ:

ՊԱՐԻԶ, 11 ապրիլ: Այսօր Notre Dame եկեղեցում տեղի ունէր հանդիսաւոր մաղիանք ժանա Գարկին սուրբերի կարգը դասուելու առիթով:

ԱՐԷՆԲ, 11 ապրիլ: Յունաստանի զանազան տեղերում դրեղ կրկնապարծ շարունակվում է և շատ թշուառութիւններ է պատճառում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՄԱ

Ապրիլի 8-ին

Վճարվի վրա 10 ֆունտ արծէ . . .	93 ր. 15 Կ.
Բերվի վրա 100 մարկ . . .	45 ր. 60
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	7
Ոսկի . . .	արծէ . . . 46
Մաքալին կուպոններ . . .	148
Արծաթ . . .	50

Բօրային դիսկոնտ . . .	5	7
Պետ. բանկի 50/0 տոկոս 1 շրջանի . . .	103 1/8	—
— — — 2-րդ . . .	103	—
— — — 3-րդ . . .	102 1/8	—
50/0 ոսկեայ բնաւ . . .	—	—
4 1/2 ոսկեայ փոխառութիւն . . .	161	25
Արենիան 50/0 փոխառ. 1-ին շրջ. . .	—	—
— — — 2-րդ . . .	100 1/8	—
— — — 3-րդ . . .	100 1/8	—
— — — 4-րդ . . .	—	—

Ներքին 50/0 առաջին փոխառութ. . .	243	50
— — — երկրորդ . . .	221	25
Պետական երկաթուղային բնաւ . . .	103	—
4 1/2 բնաւ . . .	—	—
40/0 ներքին փոխառութիւն . . .	95 1/8	—
50/0 գրու. թղթ. ադն. կալ. բանկի . . .	101	50
Ադն. կալ. Պետ. բանկի խաղաղութ. . .	—	—
Գրու. թղթ. . .	193	—
4 1/2 1/2 վկայակ. գլու. հող. բանկի . . .	99	25
4 1/2 1/2 գրուական թղթեր կալուած. . .	—	—
— — — փոխ. կրեդիտ. բնակ. մատալ. . .	154	75
— — — — — թղթալ. . .	101	25

Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	101 3/8	—
Ընկերութեան օբլիգացիաներ . . .	101	25
Մոսկուայի քաղաք. օբլիգացիաներ . . .	101	—
Օղէտայի . . .	98	25
Թիֆլիսի . . .	99	—
Գրու. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի . . .	99	—
— — — փոխալիս . . .	99	—
Ս. Պետերբուրգի բօրային տրամադրութիւնը խաղաղ է:	—	—

ԽՈՐԱԳԻՐՆԵՐ ԱՆԼԻՔԱՆԴՐԻ ՔԱՆԱԾԱՐ ՀՐԱՄԱՐԱԿԻՆՆԵՐ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՅ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնոյովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի

կրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաւոր-ժոթեան և վնասակար (սիֆիլիս) հիւանդութիւնների:

Կ. Գ. ԶԻՎՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեար-դային:

Դ. Գ. ԲՈՒՎՈՎԱՆԻ—10—11 ժ. ներքին, երե-լանների և կանանց:

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—11 1/2—12 1/2 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի:

Կին-բժիշկ ՏՈՒՐԿՈՎԻԶ—12 1/2—1 ժ. կանանց:

Ա. Պ. ԿԱՐԱՍԵՏԵԱՆ—1—1 1/2 ներքին և երե-կայայց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէղի ու սեռական օրգանների:

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7 1/2 ժ.

Ի. Ե. ՖԱՐԱՆՅՈՒՄ—7—7 1/2 ականջի, կոկորդի և քթի ու նեարդային: Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւնների և անում մէղի, խիտ, ա-րեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համայնքի բժիշկ (կոնսիլիումի) 7 օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՈՐԻԿ ՀԻՒՆԴԱՆՆԵՐ:

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ: (№ 72)

ԵՐԿՐՈՒՄԱՆ ՀԱՄԱՏԱՐԱՐԱՐՈՒ

ՕՐԵԱԿԱՆ

ՊՕՂՈՍ ԴՕԼՈՒԹԱՆԵԱՆ

Հասցէ՝ Ստարո-Խնատուտակայա փողոց, № 8:

(№ 42) 1—3

ԲՈՒՇԿ ՎԱՀԷ ՄԻՆԱՍԵԱՆ

ՎԻԷՆԱ ՀԱՍՏԱՎԱՐ

Պատրաստ է օգնել ամեն հիւանդներին, որ կը դան քաղաքը դարձանովելու համար: Հասցէ՝ Wahe Minassian. D-r. med. VIII Schlosse gasse, 10, Vienna. (№ 42) 1—5

ԼՂՍԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱՌՈՂԻԿՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԿՈՎԱՍՍԻ ՀԱՅԲ

XIX դարում

Աշխատանքից ԱՆԼԻՔԱՆԴՐԻ ԵՐԵՎԱՆԻ

Հատոր I (1800—1832 թ.)

Գինն է 2 ր. 50 Կ., ճանապարհածախսով 3 ր. Դրամում է Թիֆլիսի գրաւորատուներում:

(№ 42) 1—3

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՕՍՍԻԱ“

ԲԱՐՁՐԱՌՈՑ ՀԱՍՏԱՎԱՐ 1881 թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄԱԳՐՈՒՆԵՐ 20,500,000 ՐՈՒԲԼ

Ընկերութեան տոկոսները թղթերը պահվում են պետական բանկում:

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

այսինքն դրամագրութիւնների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժնեւոր աղջիկների համար, թողանքը աղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրութեան մասնակցութեամբ ընկե-րութեան օգուտներին:

1894 թ-ի յունվարի 1-ին «Րոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագրութիւն:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱՂԴ ԴԵՊՔԵՐԻՑ

Թէ առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւնները դործարաններում ծառայողների և բանուրների,—պակասեցնելով ապահովագրական վը-ճարները՝ ղիլիդեղի փոխարէն:

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն):

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. ապահովագրութիւն նաւերի:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ՝

ԹԻՖԼԻՍԻՄ, Սերգեյեւսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:

Ապահովագրական ստամակները՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար զմարդը դէպքերից՝ երկաթուղիներով և չորենաւերով՝ ճանապարհորդութեան ժա-մանակ արվում են նոյնպէս՝ երկաթուղիների կայարաններում և չորենաւային նա-ւահանգիստներում:

(№ 42) 1—15

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտարարում է

որ այս տարվայ ապրիլի 12-ին, ցերեկայ 12 ժամին, նշանակվ է աճուրդ՝ մինչև 450 սաժէն փայտ մատակարարելու համար քաղաքային հիմնարկութիւնների և գոր-բերի մի քանի մասերի և Թիֆլիս քաղաքում գտնված վարչութիւնների համար, 1895—1898 թ. ժամանակամիջոցով:

Փայտ մատակարարելու աճուրդը ընդունել ցանկացողները կարող են պայմանները տեսնել վարչութեան գրասենեակում ամեն օր մինչև ցերեկայ 2 ժամը, բացի կիրակի և տօն օրերից:

(№ 39) 3—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆԱԻՕՆ

Տ Ե Ր—Յ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Ի

Ընդունում է երթևեկ, կիտալոյակաւոր և թոյակաւոր աշակերտներ Պատրաստում է կապիտալան գիմնալիայի, ընկական ուսումնարանի, կաղէաների կորպուսի և այլ միջ-նակարդ ուսումնարանների համար:

Թիֆլիս, Գանսկայա փողոց, № 11, սեփական տուն:

(№ 35) (Եր. և շ.) 6—25

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է

Հասարակութեան զիտութեանը, որ 1894 թ-ի ապրիլի 27-ին, ցերեկայ 12 ժամին, աճուրդ կը նշանակվի վարձով տալու ՊԱՐՏՈՒՆ Կուր գետի վրա, Մուկրանակայա փողոցի և Սաղի մէջ, 1895 թ-ի յունվարի 1-ից, 3 տարի ժամանակով: Պայմանները կարելի է տեսնել վարչութեան գրասենեակում ցերեկայ 10 ժամից մինչև 12 ժամը:

(№ 38) 4—6

НЪМЕЦКАЯ ГОСТИНИЦА

HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՅ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նստիչներ օրնոց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նստիչների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, օրաեղ սաացվում են հայերէն, ռուսերէն, «Մշակ» և «Նոր-Գար» լրագիրները, հիւրերի համար անկարձ: Կայ բէստօրան, տեխնիկ, քաղաք-ղէնների խանութ, բաղնիքներ:

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:

(№ 21) 76—130 (2.)